

ԱՃԱՆՑԱԿՈՐ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

20-րդ դարի երկրորդ կեսին նորաբանությունների կազմության արդյունավետությունը ֆրանսերենում նկատելի է երեք միջոցների առկայությամբ՝ բառիմաստի փոփոխություն, բառակազմություն լեզվում գոյություն ունեցող բառերի և ձևույթների հիման վրա և փոխառություն: Ֆրանսերեն լեզվի միջազգային հորիզոնողը (Conseil International de la Langue Française (CILF)) բառապաշարի հարստացման միջոցների մեջ առաջնությունը տալիս է բառակազմությանը:

Լեզվաբանները, ուսումնասիրելով ֆրանսերենի բառապաշարը, շատ են վիճել նրա բառակազմական կենսունակության վերաբերյալ: Շատերն այն կարծիքն են արտահայտել, թե ֆրանսերենը կորցնում է նոր բառեր ստեղծելու կարողությունը: Որոշ փաստեր կարծես հաստատում են դա: Բառապաշարից դուրս են մնացել շատ ածանցավոր բառեր, որոնք կային հին ֆրանսերենում, իսկ բազմաթիվ հասկացություններ, որոնք այլ լեզուներում արտահայտված են մեկ բառով, ֆրանսերենում նշվում են միայն բառակապակցությամբ: Ժ.Դյուբուան ֆրանսերենի վերջածանցների փոփոխությունները հետազոտել է Լարուսի բառարանի տվյալներով և եկել այն եզրակացության, որ որոշակի թիվ կազմող ածանցավոր բառեր դուրս են մղվել կենդանի գործածությունից, բայց և ավելի շատերն ավելացել են, որոշ ածանցներ կորցրել են կենսունակությունը, բայց նաև ի հայտ են եկել նորերը:

Ընդհանուր առմամբ, ածանցումը կենդանի երևույթ է ֆրանսերենում և նորաբանական հոմանիշության հարստացման կարևոր աղբյուր է համարվում: Բազմաթիվ նորաբանությունների կարելի է համոզիպել գիտության և տեխնիկայի բնագավառում, մամուլում, գովազդում և այլուր:

20-րդ դարի 60-70թթ նորաբանությունները ֆրանսերենում դառնում են այնքան առատ, որ մեկը մյուսի ետևից լույս են տեսնում բառարաններ, նոր բառերի և նշանակությունների տեղեկատվություն, և մեծ թափով զարգանում է լեզվաբանության նոր ենթամյուղը՝ նորագիտությունը (néologie, неология):

1971թ. Ֆրանսիայում սկսեց լույս տեսնել «La banque des mots» («Բառերի շտեմարան») ամսագիրը, որը նվիրված է նորաբանության խնդիրնե-

րին և եզրաքանությանը: Որոշ համարներում գետեղված է «Pour la mise à jour des dictionnaires» (բառարանները լրամշակելու համար) խորագիրը կրող բաժինը, որտեղ նշվում են նոր բառեր, արտահայտություններ և բառիմաստներ, որոնք հանդիպում են մամուլում (հետազոտվում է տարբեր ոլորտների 30-ից ավելի պարբերական հրատարակություն), և որոնք նկատի առնված չեն լույս տեսած բառարաններում: Այս նյութերը նույնպես վկայում են ֆրանսերենի բառակազմության կենսունակության մասին:

Դիտարկելով ֆրանսերենի ընդհանուր գործածական բառապաշարը և այն համեմատելով նրա ամբողջական բառապաշարի հետ՝ պարզորոշ տեսնում ենք տարբերությունը, որ գոյություն ունի դրանց միջև նորաբանությունների թվի առումով՝ հոգուտ վերջինի: Պարզ է դառնում նաև, որ հոմանիշության հարստացման մեջ իր ուրույն տեղն ունի ածանցումը:

Ածանցավոր նորաբանություններն ամբողջությամբ համահունչ են ֆրանսերենի բառակազմական օրինաչափություններին և կառուցվածքով ու պատճառաբանվածությամբ միանգամայն ընդունելի ֆրանսախոս լեզվակերպների համար, քանի որ սովորական, ընդունված չափանիշներով կազմված բառերից շեղումներ չունեն, այսինքն կանոնական են:

Ածանցները սակավ հնչյուններից կազմված մասնիկներ լինելով՝ այս կամ այն նշանակությունն են հաղորդում արմատին կամ բառին, երբ հարաբերակցվում են նրա հետ՝ արտահայտելով արտաքին աշխարհի բազմազան իրողությունների, երևույթների միջև իրապես գոյություն ունեցող զանազան կապեր ու հարաբերություններ: Ըստ այդմ էլ հնչյունական տեսակետից որքան պարզ, իմաստային, իմաստաբանական տեսակետից, ընդհակառակը, բարդ պատկեր են ներկայացնում:

Գործածվելով բազմաբնույթ հիմնական ձևույթների (արմատների և բառերի) հետ, ածանցները ոչ միայն մեծ թվով բառեր են կազմում, այլև բազմազան իմաստներ են արտահայտում ու հարստացնում լեզվի իմաստաբանական դաշտը:

Ֆրանսերենին հատուկ են երեք կարգի ածանցներ (նախածանց, միջածանց, վերջածանց), որոնք իրենց կիրառություններով, բառակազմական արժեքով ու նշանակությամբ, ընդհանուր քանակով և տեսակարար կշռով որոշակիորեն տարբերվում են իրարից և կազմում առանձին համակարգեր:

Ժամանակակից նորաբանությունների կազմության մեջ ակներև է մանավանդ, վերջածանցների թիվն ու բազմազանությունը: Նշենք լայն գործածություն ձեռք բերած որոշ վերջածանցներ, հիմնականում գոյականակերտ և ածականակերտ, որոնցով կազմված նորաբանությունները, յուրահատուկ լինե-

լով խոսակցական ֆրանսերենին, հաճախ կորցնում են ոճական երանգավորումը և նշանակցումային առումով դառնում չեզոք բառեր:

- ard – Grand Larousse de la langue française բառարանում այս վերջածանցը բնութագրվում է որպես գործող անձ ցույց տվող, որն ունի քամահրական նրբերանգ: Պ.Ժիլբերի «Նոր բառերի բառարան»-ում հանդիպում ենք – ard վերջածանց ունեցող բառերի, որոնք կորցրել են քամահրական երանգը:

smicard.e – նվազագույն աշխատավարձ ստացող; (smic- նվազագույն աշխատավարձ)

thésard.e – ատենախոսություն գրող անձ:

Արանց կողքին veinard նորաբանությունը դարձել է chanceux – *հաջողակ* ածականի հոմանիշը՝ պահպանելով խոսակցական ոճին հատուկ նշանակցումը:

Միևնույն ժամանակ հաճախ դժվար է հստակ առանձնացնել տվյալ ածանցով պայմանավորված քամահրական երանգի բնույթը: Երբեմն այն առկա է անմիջապես հիմքում: Օրինակ՝

dégonflard – pétichard – վախկոտ և այլն:

-eur վերջածանցը լայն գործածություն ունի լեզվի բոլոր շերտերում: Այս վերջածանցը, ինչպես և նախորդը, կազմում է գոյականներ և ածականներ: Այսպես.

glandeur, branleur – *ծույլ, անբան* բառերը պատկանում են խոսակցական ոճին, իսկ autodidacteur – *ինքնակրթող*, attendrisseur – *միս փափկացնող սարք* բառերը պատկանում են ընդհանուր գրական լեզվին:

-os վերջածանցը ֆրանսերեն է եկել լատինա-ամերիկյան երաժշտության ու կենսակերպի (latinos) նորածն դառնալու հետ և օգտագործվում է գոյականներ, ածականներ և նույնիսկ մակբայներ կազմելու համար.

chicos – *զեղեցիկ*

coelos – *հանգիստ, մեղմ*

craignos – *վախկոտ*

gratos – *անվճար*

-os վերջածանցի կիրառումը տարածում է ստանում 20-րդ դարի ութսունական թվականներին և այսօր այդ վերջածանցի օգնությամբ բառեր կազմելու միտումն ակնհայտ է:

-ouille վերջածանցն ունի ցայտուն քամահրական երանգ՝

charmouille – *հրապուրիչ*

pétouille – *հետիոտն*

glandouille – թափառական

-é -- ածականակերտ վերջածանցով նույնպես մի շարք նորակազմություններ են հայտնվել խոսակցական ֆրանսերենում.

baraqué < baraque – մեծ, ուժեղ; friqué < frie – հարուստ:

Ավելի հազվադեպ են հանդիպում – erie, -ette, -eux, -ment, -on վերջածանցները, որոնք առավելապես ձևակազմիչ արժեք ունեն.

-erie – orduerie – աղտոտություն

-ette – femmelette – հիվանդ, թուլակազմ կին

-eux – barboueux – մորուքավոր, գաղտնի ոստիկան

pagailleux – անկարգ

-ment – peinardelement – հանդարտ, հանգիստ

-on – bradillon, chicon – պերճ, շքեղ:

Այլ վերջածանցներ (-ouser, -oche, -ingue և այլն) բառին հաղորդում են նվազական ռճական արժեք

-ouser – planquouser – թաքնվել

-oche – fastoche – հեշտ

pétoche – վախ

-ingue – baltringue – բալթիական

Այսպիսով, ածանցավոր նորակազմությունները, մասնավորապես խոսակցական ֆրանսերենում, որոշակի տեղաշարժեր են առաջացնում ժամանակակից ֆրանսերենի իմաստային ենթահամակարգերում ու հոմանիշային շարքերում և, լրացնելով դրանք, զգալիորեն հարստացնում լեզվի բառափմաստային դաշտն ու արտահայտչական հնարավորությունները:

Գրականություն

1. Grand Larousse en 5 volumes, Paris, 1992.
2. P. Gilbert, Dictionnaire des mots nouveaux, Hachette-Tchou, Paris, 1971.
3. Le Nouveau Petit Robert “Dictionnaire alphabétique et analogique de la langue française” Paris 2003.